ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «ՀՀԿԳՆԳՀԱՊՁԲ-18/6-1»

ք. Երևան 01» 06 2018թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար՝ Ն. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Սմարթլայն>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Տ. Ղարիբյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Կատարողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Պատվիրատուին մատակարարել պայմանագրի N 1 հավելված տեխնիկական բնութագրով և N 2 հավելված գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Կատարողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Կատարողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Կատարողից պահանջել հատուցելու վնասները, եթե Պատվիրատուն Կատարողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Կատարողը էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Ջնջել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Կատարողին:

2.2 Պատվիրատուն պարտավոր է

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Կատարողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Կատարողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Կատարողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Կատարողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Կատարողը իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Պատվիրատուի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Պատվիրատուն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Պատվիրատուի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Պատվիրատուի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պատվիրատուին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Պատվիրատուին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Պատվիրատուին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Պատվիրատուի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Պատվիրատուի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Կատարողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Պատվիրատուին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Պատվիրատուին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 463124 /չորս հարյուր վաթսուներեք հազար հարյուր քսանչորս/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Կատարողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

3.3 Պատվիրատուն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների

Փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Կատարողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը, իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կատարողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Կատարողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների

տարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2 և N 3 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության և գիտության նախարարություն	<<Սմարթլայն>> ՍՊԸ
Ք. Երևան, Կառավարական տուն 2	ք.Երևան, Վարդանանց 110
ՀՀ ՖՆ աշխատակազմի	<<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ
գործառնական վարչություն	Հ/Հ 163007031509
Հ/Հ 900011018562	ՀՎՀՀ 01548908
Հ/Հ 900011019347 /ԲՈՀ/	
ՀՎՀՀ 02512868	
ՀՎՀՀ 00005982 /ԲՈՀ/	Տ. Ղարիբյան ----------
Աշխատակազմի ղեկավար՝	(ստորագրություն)
---------- Ն. Հարությունյան	Կ.Տ
/ստորագրություն/	
Կ.Տ	

«01» «06» 2018թ.

Հավելված N 1
կնքված
«ՀՀԿԳՆԳՀԱՊՁԲ-18/6-1» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Գնման առարկա են հանդիսանում գրասենյակային ապրանքները /այսուհետ՝ Ապրանք/

Ապրանքի				
հրավերով նախատեսված չափաբաժնի համար	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը
1	22811150-1	Նոթատետրեր, Sinar Line	YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO., LTD, ՉԺՀ	Կազմը՝ խիտ թուղթ (250գ/մ²) հարթ կամ ֆակտուրային մակերևույթով, էջերի քանակը՝ 50
2	22811180-1	Օրագրեր և ամենօրյա նշուների տետրեր, Diary	YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO., LTD, ՉԺՀ	Օրատետր A5, կազմված արհեստական կաշվե կազմից, նախատեսված 2017 թվականի համար
6	30192111-2	Թանաքի բարձիկներ-2, Horse	YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO., LTD, ՉԺՀ	Թանաքի բարձիկ՝ կապույտ գույնի
9	30192121-1	Գրիչ գնդիկավոր, WEN XUAN	YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO., LTD, ՉԺՀ	Գնդիկավոր, թանաքի գույնը կապույտ, սև, կարմիր տարբեր տեսակի կառուցվածքով, 0.5 մմ ծայրով
10	30192128-1	Գրիչ գելային, GEL PEN	YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO., LTD, ՉԺՀ	Գրիչ, 0,5 մմ ծայրով,կապույտ, սև, (գել)
11	30192130-1	Մատիտներ, Amigo	YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO., LTD, ՉԺՀ	Մատիտ հասարակ, ռետինով սև կարծրությունը HB
12	30192133-1	Սրիչ, սովորական, Sharpener	YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO., LTD, ՉԺՀ	Սրիչ սովորական, գրաֆիտե մատիտի համար
13	30192160-1	Շտրիխներ, Micai	YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO., LTD, ՉԺՀ	Բաղադրանյութ վրձինով, պլաստմասե տարայի մեջ
17	30192720-1	Գծանշիչ, Skyglory	YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO., LTD, ՉԺՀ	Տարբեր գույնի՝ նախատեսված ընդգծումներ, նշումներ անելու համար, ֆետրից կամ այլ ծակոտկեն նյութից տափակ ծայրոցով:
19	30193110-1	Գրենական պիտույքների դասավորման հարմարանքներ և պարագաներ, Desk Organizer	YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO., LTD, ՉԺՀ	Գրենական պիտույքների դասավորման հարմարանքներ և պարագաների լրակազմ՝/12-14 հատ/
20	30193200-1	Փաստաթղթերի համար նախատեսված, սեղանի վրա դրվող դարակաշարեր, 3 Tray file basket	YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO., LTD, ՉԺՀ	թղթադարակ, հարկերով, մետաղական, 3 նիստով, նախատեսված A4 (210 x 297) մմ ձևաչափի թերթերի համար:
23	30197232-1	Թղթապանակ արագակար, թղթյա, Արագակար	ՀՀ, Հայաստանի հանրապետություն	Արագակար կավճած ստվարաթղթից, մետաղական ամրակով, A4 (210x297) մմ ձևաչափի թերթերի համար
24	30197234-1	Թղթապանակ կոշտ կազմով,	YIWU GUYUE IMPORT AND	Թղթապանակ /ռեգիստր/ կոշտ ստվարաթղթե կազմով, համապատասխան չափի կռնակով

		ALBA RADO	EXPORT CO., LTD, ՉԺՀ	(ծավալով), մետաղյա ամրացման հարսարանքով, A4 (210x297) մմ ձևաչափի թղթերի համար
25	30197322-1	Կարիչ 20-50 թերթի համար, Max	YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO., LTD, ՉԺՀ	Գրասենյակային կարիչ 20-ից մինչև 50 թերթ մետաղալարե կապերով ամրացնելու համար
26	30197331-1	Դակիչ քանոնով, Kangaro	YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO., LTD, ՉԺՀ	Ծակոտիչ գրասենյակային, մինչև 36 թերթ դակելու համար
27	30197340-1	Ապակարիչ, DL	YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO., LTD, ՉԺՀ	Գրասենյակային ապակարիչ՝ N10, N24, N26 և N26.6 ասեղներով կարված թղթերը քանդելու համար
28	30199232-1	Ծրար մեծ A4 ֆորմատի ձևաչափի համար, Libra	ԱՄԷ, ԱՄԷ	Ծրար՝ A4 (210x297) մմ ձևաչափի, 90 % սպիտակության, 1 մ² մակերեսը՝ 100 գ զանգվածով N1 օֆսեթային թղթից ըստ ԳՕՍ 9094-89, ինքնասոսնձվող
29	30199420-1	Թուղթ նշումների համար, սոսնձվածքով, Jia Te	YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO., LTD, ՉԺՀ	Թուղթ նշումների համար, սոսնձվածքով
30	30232320-1	Կոմպակտ սկավառակներ CD կարդացող և /կամ/ ձայնագրող սարքեր, Princo	Թայվան, Թայվան	Դատարկ սկավառակ, առանց տուփի CD
31	39241210-1	Մկրատ գրասենյակային, Scissors	YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO., LTD, ՉԺՀ	Գրասենյակային, մետաղյա, սուր ծայրով, պլաստմասե բռնակով, 18 սմ երկարությամբ:
33	39263410-1	Ամրակ մետաղյա փոքր, DL	YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO., LTD, ՉԺՀ	Փոքր, գրասենյակային ամրակներ (սկրեպ) մետաղական կամ պոլիմերային պատվածքով, (25-33) մմ երկարությամբ: Թղթի դարսը լիարժեք ամրությամբ միասնական պահելու կարողությամբ
34	39263510-1	Սեղմակ փոքր, DL	YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO., LTD, ՉԺՀ	Մետաղական, լայնությունը 25 մմ
35	39263520-1	Սեղմակ միջին, DL	YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO., LTD, ՉԺՀ	Մետաղական, լայնությունը 32 մմ
36	39292510-1	Քանոն պլաստիկ, Ruller	YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO., LTD, ՉԺՀ	Քանոն պլաստիկ 30սմ

Ծանոթություն.

1. Ապրանքները պետք է լինեն նոր և չօգտագործված:
2. Մատակարարումը իրականացվելու է Ք. Երևան, Կառավարական տուն 2 հասցեով՝ հանձնելով ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի քարտուղարության տնտեսավարման և սպասարկման բաժնին:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ կրթության և գիտության նախարարություն
Ք. Երևան, Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ 900011018562
Հ/Հ 900011019347 /ԲՈՀ/
ՀՎՀՀ 02512868
ՀՎՀՀ 00005982 /ԲՈՀ/
Աշխատակազմի ղեկավար՝

----------Ն. Հարությունյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

<<Սմարթլայն>> ՍՊԸ
ք.Երևան, Վարդանանց 110
<<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ
Հ/Հ 163007031509
ՀՎՀՀ 01548908

Տ. Ղարիբյան ----------
(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված N 2
« 01 » « 06 » 2018թ. կնքված
«ՀՀԿԳՆԳՀԱՊՁԲ-18/6-1» ծածկագրով պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

հազ. դրամ

Չափաբաժին	Ապրանքի անվանումը	Չափման միավոր	Միավորի նախահաշվային գինը	09,08,01,01 Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում ծրագիր ԿԳՆ		09,08,01,01 Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում ծրագիր-ԲՈՀ		Ընդամենը	
				Ենթակա է գնման II-րդ եռամսյակում՝ մինչև 15.06.2018թ. բայց ոչ շուտ քան պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից 20-րդ օրացուցային օրը բացառությամբ մատակարարի կողմից ավելի կարճ ժամկետում մատակարարելու համաձայնության դեպքի					
				քանակ	գին	քանակ	գին	քանակ	գին
1	Նոթատետրեր	հատ	0.170	50	8.50			50	8.50
2	Օրագրեր և ամենօրյա նշումների տետրեր	հատ	0.980	23	22.540	10	9.80	33	32.340
6	Թանաքի բարձիկներ-2	հատ	0.260	5	1.30			5	1.30
9	Գրիչ գնդիկավոր	հատ	0.030	300	9.00	50	1.50	350	10.50
10	Գրիչ գելային	հատ	0.080	108	8.640	12	0.96	120	9.60
11	Մատիտներ	հատ	0.025	290	7.250	10	0.25	300	7.50
12	Սրիչ, սովորական	հատ	0.020	190	3.80	10	0.20	200	4.00

13	Շտրիխներ	հատ	0.160	135	21.60	16	2.56	151	24.160
17	Գծանշիչ	հատ	0.125	230	28.750	12	1.50	242	30.250
19	Գրենական պիտույքների դասավորման հարմարանքներ և պարագաներ	հատ	1.650	8	13.20			8	13.20
20	Փաստաթղթերի համար նախատեսված, սեղանի վրա դրվող դարակաշարեր	հատ	2.450	20	49.00			20	49.00
23	Թղթապանակ արագակար, թղթյա	հատ	0.050	300	15.00			300	15.00
24	Թղթապանակ կոշտ կազմով	հատ	0.540	150	81.00			150	81.00
25	Կարիչ 20-50 թերթի համար	հատ	1.150	30	34.50			30	34.50
26	Դակիչ քանոնով	հատ	1.250	8	10.00			8	10.00
27	Ապակարիչ	հատ	0.140	29	4.060			29	4.060
28	Օրար մեծ A4 ֆորմատի ձևաչափի համար	հատ	0.030	2500	75.00			2500	75.00
29	Թուղթ նշումների համար, սոսնձվածքով	տուփ	0.100	90	9.00			90	9.00
30	Կոմպակտ սկավառակներ CD կարդացող և /կամ/ ձայնագրող սարքեր	հատ	0.075	70	5.250			70	5.250
31	Մկրատ գրասենյակային	հատ	0.190	28	5.32	2	0.38	30	5.70
33	Ամրակ մետաղյա փոքր	տուփ	0.080	140	11.20			140	11.20

34	Սեղմակ փոքր	հատ	0.018	504	9.072			504	9.072
35	Սեղմակ միջին		0.023	504	11.592			504	11.592
36	Քանոն պլաստիկ	հատ	0.070	20	1.40			20	1.40
	Ընդամենը				445.974		17.150		463.124

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ կրթության և գիտության
նախարարություն
Ք. Երևան, Կառավարական
տուն 2
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ 900011018562
Հ/Հ 900011019347 /ԲՈՒ/
ՀՎՀՀ 02512868
ՀՎՀՀ 00005982 /ԲՈՒ/
Աշխատակազմի
ղեկավար՝
_____ Ն.
Հարությունյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

<<Սմարթլայն>> ՍՊԸ
ք.Երևան,
Վարդանանց 110
<<Հայէկոնոմբանկ>>
ԲԲԸ
Հ/Հ 163007031509
ՀՎՀՀ 01548908

Տ. Ղարիբյան
_____
(ստորագրություն)
Կ.Տ

01548908
"ՍՄԱՐԹԼԱՅՆ"
"СМАРТЛАЙН"
«Կ»

Հավելված 3
«01» 06 2018թ կնքված
N «ՀՀԿԳՆԳՀԱՊՁԲ-18/6-1» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հազ.դրամ

Չափաբաժին	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ապրանքի անվանումը	Ենթակա է վճարման 2018թ պետական բյուջեի ծրագրերից՝							
			09,08,01,01 Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում ծրագիր ԿԳՆ				09,08,01,01 Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում ծրագիր-ԲՈՀ			
			Ծրագրի հաշվեհամար - ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011018562 /4261 հոդված/				Ծրագրի հաշվեհամար - ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011019347 /4261 հոդված/			
			1-ին կիսամյակ	9 ամիս	Տարի	ընդամենը	1-ին կիսամյակ	9 ամիս	Տարի	ընդամենը
1	22811150-1	Նոթատետրեր								
2	22811180-1	Օրագրեր և ամենօրյա նշումների տետրեր								
6	30192111-2	Թանաքի բարձիկներ-2								
9	30192121-1	Գրիչ գնդիկավոր								
10	30192128-1	Գրիչ գելային								
11	30192130-1	Մատիտներ								
12	30192133-1	Սրիչ, սովորական								
13	30192160-1	Շտրիխներ								

17	30192720-1	Գծանշիչ								
19	30193110-1	Գրենական պիտույքների դասավորման հարմարանքներ և պարագաներ								
20	30193200-1	Փաստաթղթերի համար նախատեսված, սեղանի վրա դրվող դարակաշարեր								
23	30197232-1	Թղթապանակ արագակար, թղթյա	445.974	445.974	445.974	445.974	17,150	17,150	17,150	17,150
24	30197234-1	Թղթապանակ կոշտ կազմով								
25	30197322-1	Կարիչ 20-50 թերթի համար								
26	30197331-1	Դակիչ քանոնով								
27	30197340-1	Ապակարիչ								
28	30199232-1	Ծրար մեծ A4 ֆորմատի ձևաչափի համար								
29	30199420-1	Թուղթ նշումների համար, սոսնձվածքով								
30	30232320-1	Կոմպակտ սկավառակներ CD կարդացող և /կամ/ ձայնագրող սարքեր								
31	39241210-1	Մկրատ գրասենյակային								
33	39263410-1	Ամրակ մետաղյա փոքր								
34	39263510-1	Սեղմակ փոքր								

35	39263520-1	Սեղմակ միջին
36	39292510-1	Քանոն պլաստիկ

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ կրթության և գիտության
նախարարություն
Ք. Երևան, Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ 900011005593
ՀՎՀՀ 02512868

Աշխատակազմի ղեկավար՝
---------- Ն. Հարությունյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
<<Սմարթլայն>> ՍՊԸ
ք.Երևան, Վարդանանց 110
<<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ
Հ/Հ 163007031509
ՀՎՀՀ 01548908

Տ. Ղարիբյան ---------- 01548908
(ստորագրություն)
Կ.Տ «Կ»